ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվականի N 573-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.11.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 545-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, <<ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 38-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին 24-րդ կետի և <<Հիմնադրամների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի և 13-րդ հոդվածի պահանջներով, որոշում եմ.

1. Անվավեր ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 08.11.2024 թվականի թիվ 545-Ա որոշումը:

2. Հիմնադրել <<Արենի համայնքային զարգացման>> հիմնադրամ:

3. Սահմանել, որ <<Արենի համայնքային զարգացման>> հիմնադրամի հիմնադիրն է ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքը, որի անունից հանդես եկող լիազորված անձը ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարն է:

4. Հաստատել <<Արենի համայնքային զարգացման>> հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

5. <<Արենի համայնքային զարգացման>> հիմնադրամի տնօրեն նշանակել Սյուզան Դավիթի Մարգարյանին (նույն.քարտ՝ 009514167, տրված 13.01.2018թ. 037-ի կողմից, հասցե՝ ՀՀ ՎՁՄ, Եղեգնաձոր համայնք, ք. Եղեգնաձոր, Զ. Անդրանիկի փ., շ. 19, բնկ. 26)

5. <<Արենի համայնքային զարգացման>> հիմնադրամի տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել հիմնադրամի պետական գրանցումը:

6.Սույն որոշումը ներկայացնել Արենի համայնքի ավագանու հաստատմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**